ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«15» հոկտեմբերի 2015 թվական N 163-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 168-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի դրույթներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին» N 168-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) 2-րդ և 3-րդ կետերը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.
      ա. «2. Գյումրի համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով ընտրվում է ժողովրդի իշխանություն իրականացնելու և Գյումրու համայնքային խնդիրները լուծելու նպատակով»,
      բ. «3. Գյումրի համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններն են՝ ավագանին և համայնքի ղեկավարը: Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա.Ադամյան		
Ա. Բաղրամյան		
Մ. Գաբոյան		
Ա.Գրիգորյան		
Վ. Եդիգարյան		

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ. Մխիթարյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«15» հոկտեմբերի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«15» հոկտեմբերի 2015 թվական N 164-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով և հիմք ընդունելով Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի կողմից կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերի օգտագործման սխեմաները և ներկայացված ելակետային տվյալները՝ **համայնքի ավագանին որոշում է .**

Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և հաստատել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա.Ադամյան		
Ա. Բաղրամյան		
Մ. Գաբոյան		
Ա.Գրիգորյան		
Վ. Եդիգարյան		
Հ. Խաչատրյան		
Հ. Կարապետյան		
Տ.Հովհաննիսյան		

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ. Մխիթարյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«15» հոկտեմբերի 2015 թ.

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2015 թ. հոկտեմբերի 15-ի
N 164-Ն որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

Գյումրի համայնքայմքի սեփականությունը հանդիսացող առանձնացված հողամասերի աճուրդով օտարելու մեկնարկային գների և պայմանների

Հ/Հ	Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/	Ծածկագիրը մակերեսը քառ.մ	Հողամասի նպատակային և գործառական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Հաստատված մեկնարկային գինը /ՀՀ դրամ/
1.	Ղուկասյան փող. 7-րդ շարք N 7/3 9-րդ գոտի	08-001-1314-0124 62.5	Բնակավայրերի այլ հողեր	Կառուապատում	320 000
2.	Շիրակացու փող. N 52/11 9-րդ գոտի	08-001-0671-0157 200.0	Բնակավայրերի բնակելի կառուցապատում	Բնակելի տան կառուցում	600 000
3.	Այգաբաց 3-րդ շ. N 50 11-րդ գոտի	08-001-1181-0094 370.0	Բնակավայրերի բնակելի կառուցապատում	Բնակելի տան կառուցում	1 480 000
4.	Այգաբաց 3-րդ շ. N 52 11-րդ գոտի	08-001-1181-0102 370.0	Բնակավայրերի բնակելի կառուցապատում	Բնակելի տան կառուցում	1 480 000
5.	Երևանյան խճ. . N 159/8 11-րդ գոտի	08-001-1181-0109 24.0	Բնակավայրերի բնակելի կառուցապատում	Ավտոտնակի կառուցում	72 000
6.	Խրիմյան Հայրիկի փող. N 48/2 9-րդ գոտի	08-001-1225-0128 495.3	Բնակավայրերի բնակելի կառուցապատում	Սպասարկման մասով բնակելի տան կառուցում	1 240 000
7.	Հակոբյան փող. N 41/11 8-րդ գոտի	08-001-0759-0063 69.0	Բնակավայրերի բնակելի կառուցապատում	Բնակելի տան կառուցում	1690 000

Քաղաքաշինության և
ճարտարապետության բաժնի պետ՝ **Ա.ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«15» հոկտեմբերի 2015 թվական N 165–Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 79-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 5-րդ մասի 1-ին պարբերությամբ՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 15-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Ղարիբջանյան խճուղի N 3/11 հասցեի շինությունն ու հողամասը մրցույթով վարձակալության տրամադրելու մասին» N 79-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) «1186,9 (մեկ հազար հարյուր ութսունվեց ամբողջ ինը տասնորդական)» թիվը և բառերը փոխարինել «1377,0 (մեկ հազար երեք հարյուր յոթանասունյոթ)» թվով և բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Ադամյան _____

Ա. Բաղրամյան _____

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ. Եդիգարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ. Մխիթարյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«15» հոկտեմբերի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հոկտեմբերի 2015 թվական N 166-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 04-Ի ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 5-րդ մասի 1-ին պարբերությամբ՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի սեպտեմբերի 04-ի որոշումներում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Դուդկոյի և Բուլվարային փողոցների հատման վայրում գտնվող հրապարակի անվանման մասին» N 128-Ա որոշման նախաբանում «2389» թիվը փոխարինել «2387» թվով,

2) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 15-ի N 86-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 131-Ա որոշման վերնագրում և 1-ին կետում «փոփոխություններ» բառը փոխարինել «փոփոխություն» բառով,

3) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Բագրատունյաց հրապարակ N 10/2 հասցեի հողամասը մրցույթով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու և հողամասի վարձավճարի մեկնարկային չափը սահմանելու մասին» N 134-Ա որոշման նախաբանում «կետերի» բառը փոխարինել «մասերի» բառով,

4) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 12-ի N 190-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 138-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի «Շիրակի մարզպետարանի ԸԿԵՊԲ-ի հոգեբան» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի առաջատար մասնագետ» բառերով,

5) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2015 թվականի փետրվարի 06-ի N 7-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 119-Ա որոշման վերնագրում և 1-ին կետում «Գյումրի համայնքի» բառերից հետո ավելացնել «ավագանու» բառը,

6) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի կողմից 2015 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին» N 127-Ա որոշման նախաբանում «որոշման» բառը փոխարինել «որոշմամբ» բառով և «որոշմամբ» բառից հետո ավելացնել «հաստատված կարգի 9-րդ կետի» բառերը և թիվը,

7) «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Գյումրու ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» N 129-Ա որոշման 1-ին կետում «կազմակերպությանը» բառից հետո ավելացնել «՝ ուսումնամարզական աշխատանքների բարելավման նպատակով» բառերը,

8) «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիային հողամաս նվիրաբերելու մասին» N 130-Ա որոշման՝

ա. նախաբանում «կետով» բառից հետո ավելացնել «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 65-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով» բառերը և թվերը,

բ. 1-ին կետում «հանդիսացող» բառից հետո ավելացնել «,08-001-160-010 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության հողերի հասարակական կառուցապատման գործառական նշանակությամբ» թվերը և բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Ադամյան _____

Ա. Բաղրամյան _____

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ. Եդիգարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ. Մխիթարյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«15» հոկտեմբերի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հոկտեմբերի 2015 թվական N 167-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԱՐԵԳԻՆ Ա ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ N 5/1 ՀԱՍՑԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գարեգին Ա փողոց, 1-ին նրբանցք, N 5/1 հասցեի վարչական շենքը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 09102014-08-0008 վկայական) չի օգտագործվում համայնքի կարիքների համար և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Աճուրդով օտարել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գարեգին Ա փողոց, 1-ին նրբանցք, N 5/1 հասցեի 472.37 (չորս հարյուր յոթանասուներկու ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով վարչական շենքը և շենքի պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 08-001-0549-0023 կադաստրային ծածկագրով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, պահեստարաններ գործառնական նշանակությամբ 0.25858 (զրո ամբողջ քսանհինգ հազար ութ հարյուր հիսունութ հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը:

2.Հիմք ընդունելով <<Պ.Ա.Գ. Էսթեյթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սույն որոշման 1-ին կետում նշված գույքի շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ-137 հաշվետվությունը՝ հաստատել աճուրդի մեկնարկային գինը՝ 5500000 (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

	Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա.Ադամյան			
Ա. Բաղրամյան			
Մ. Գաբոյան			
Ա.Գրիգորյան			
Վ. Եդիգարյան			

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ. Մխիթարյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«15» հոկտեմբերի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հոկտեմբերի 2015 թվական N 168-Ա

ՖՐՈՒՆԶԵ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՔՈՒՇՔՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի բնակիչ, 2015 թվականի սեպտեմբերին սահմանամերձ շրջանում ծանր վիրավորված ժամկետային զինծառայող Դավիթ Քուշքյանի հայր Ֆրունզե Հովհաննեսի Քուշքյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ որդու բուժման և խնամքի նպատակով Երևան քաղաքում վարձակալած բնակարանի առաջիկա 4(չորս) ամիսների վարձավճարը վարձատուին վճարելու համար իր ընտանիքին դրամական օգնություն հատկացնելու խնդրանքով:

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, նկատի ունենալով Ֆրունզե Քուշքյանի ընտանիքի սոցիալապես անապահով վիճակը և հիմք ընդունելով նրա դիմումը (քաղաքապետարանում մուտքագրված՝ 2015 թվականի հոկտեմբերի 12-ին, N 13024 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Ֆրունզե Հովհաննեսի Քուշքյանին, որպես դրամական օգնություն, յուրաքանչյուր ամիս հատկացնել 60.000 (վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ իր կողմից Երևան քաղաքում վարձակալած բնակարանի 2015 թվականի հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր և 2016 թվականի հունվար ամիսների վարձավճարի մուծման նպատակով:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 10/6/1 գործառական դասակարգման (4728) <<Բնակարանային նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Ադամյան _____

Ա. Բաղրամյան _____

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ. Եդիգարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ. Մխիթարյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«15» հոկտեմբերի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«15» հոկտեմբերի 2015 թվական N 169-Ա

«ՍԻՄՈՆՅԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 65-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի «Գույք նվիրաբերելու մասին» N 1142-Ա որոշման 1-ին կետի պահանջները՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շչորսի փողոցի N 1 հասցեի շենքի զբաղեցրած 08-001-0762-0002 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի հողերի խառը կառուցապատման գործառական նշանակության 0.184726 (զրո ամբողջ մեկ հարյուր ութսունչորս հազար յոթ հարյուր քսանվեց միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը նվիրաբերել «Սիմոնյան» կրթական հիմնադրամին՝ կրթական ու մշակութային կենտրոն ստեղծելու նպատակով:

Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա.Ադամյան		
Ա. Բաղրամյան		
Մ. Գաբոյան		
Ա.Գրիգորյան		
Վ. Եդիգարյան		
Հ. Խաչատրյան		
Հ. Կարապետյան		

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ. Մխիթարյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«15» հոկտեմբերի 2015 թ.